



ՅԱԿԵԲԵՐԵՆ ՏԵՍՈՒՐԻՆԻ

Լինձնա, 27 Օգոստոս, 1895.

Դպրոցաց հանգիստն նախանձը կը շարժէ կարծես դիւանագիտաց եւ քաղաքագիտաց, որոնք՝ յոգնած երկարատեւ նիստերէ եւ արդիւնաւոր քայց շատ անգամ՝ ալ ապարդիւն վիճաբանութիւններէ, զիտագնացութեան հաճոյքներուն մէջ կը փնտռեն իրենց զօրութիւնն ու հանգիստը: Բնականապէս դաշլիճներու պիտոններն ու քաղցիցներն թափուր մտաւոր կանանչազորք սեղաններն ալ թափուր կը մտնեն, եւ դիւանագիտութիւնն ալ կը ստիպուի առ ժամանակ մի արծաւուրդ վայելել:

Այսէ Օգոստոս ամիսն նկարագիրն: Անգղիա: Ամիսն 12ին խզեց այս իւր լուծիւնն, քացաւ իւր դաշլիճը նշանաւոր զարմառով մի որ ըստ քաւականի նիւթ մատակարարեց, կը մատակարարէ եւ պիտի մատակարարէ այսուհետեւ ալ քովանդակ աշխարհի լրագրաց:

— 2ին իւր վրայ հրաւիրել կ'ուզէ անգղիական մտադրութիւնն եւ անոր համար կարծենք ձեռնամուխ կ'ըլլայ առ ժամանակ մի դադարձ հալածանքն, լիբրտին բորքընելու: Ըստ քաւականի թուով քրիստոնեայք զոհ եղան չինական խոռվայոյզ ամբոխին: Մեծն Բրիտանիա, եւ Միացեալ Նահանգներն պահանջեցին, որ Փու-Չեու քաղաքին խոռվութեան զոհ գացած քրիստոնէից մահուան հեղինակներուն դատին ներկայ գլուխուն ի պաշտօնէ իրենց հիւպատոսներն: Ընդդէմ՝ ոգորեցաւ Չինաստան, քայց ի վերջոյ հաւանեցաւ, արդէն վեց հոգի ի մահ դատապարտուեցան. ամէն օր նորանոր ձերբակալութիւններ: Արեւելեանն եւ արեւմտեան Ասիա խաղաղութեան պաշտպան մի գտաւ յանձին Անգղիական հզօր թագուհոյն:

Գաղղիա եւ Սլաւոնիա: Երկուքն ալ դժուարին պատերազմներու յորձանքներուն մէջ, օտար երկիր, անվարժ օդ, տեղւոյն եւ տեղացւոց յաջող դիրքերէն եւ

նպաստաւոր հանգամանքներէն զուրկ պատերազմ կը մղեն: Բայց տարբեր մակատագրով: Գաղղիա՝ ըստ երեւութիւնն եւ տրուած տեղեկութիւններէն դատելով, մօտ է իւր երեքգումանք կանգնելու թշնամեաց անտիկ համարեալ թերդերուն վրայ: Բայց քախտը չի ժպտիր Սլաւոնիացոց: Իրականութիւնն եւ պաշտօնական ծանուցումներ իրարու հակառակ կ'երեւան. իրականութիւնն է թէ Գուպացիք անքանի մ'ամէն ի վեր կը զբաղեցնեն թափանիական զօրքն, եւ Մէլիլայի յաղթողն իսկ Մարթինէզ Գամբոս հագիւ մագապուր կը պրծի թշնամեաց մահատու հարուածէն, զոր տալով իրեն տեղ իւր աշակից զօրավարներէն մէկն. իրականութիւնն այն է որ նորանոր քանակներ կը դրկուին ի Գուպա, տարակուսական յաղթանակը վերջ ի վերջոյ կանգնելու: Իսկ պաշտօնական ծանուցումներն որ միշտ Մատրիտ կը խմբագրուին եւ ի վաճառ կը հանուին, պարզապէս յաղթութեան տեղեկութիւններով թմբեցընել կ'ուզեն լրագրապետներն ու յօդուածագիրներն եւ ատենց ձեռք նանք ընկերցող հասարակութիւն: Լաւագոյն կ'ըլլար, եթէ տեղացւոց անաշարիւթութեանց զիջողամիտ ունկնդրութիւն մը պարգեւէր Սլաւոնիա, որով ի զուր թափուած այնչափ արիւններ շերմ շրջան կ'ընէին հանդարտօրէն իրենց ընկ իրակաց մէջ, եւ աւելի շերմ համակրութեամբ կը լեցուէին օտար տիրապետաց նկատմամբ: Աշխարհակալութեանց պատմութիւնն անա նոր ապացոյց մը կը ստանայ, թէ “վաղ կամ անգամ ամէն երկիր իւր ընականաց է. եւրոպայն՝ եւրոպայի, Ամերիկան՝ Ամերիկայի,,:

Առտորիա: Կոմս Պատէնի պիտի ըլլայ ապագայ նախարարապետ անտրիական դաշլիճին, վասն զի Կոմս Թաւաֆէէին՝ յաջորդ Վիտտիլլեյէ իշխանին եւ պաշտօնակցաց հրաժարմամբ՝ իւր յարմարագոյն անձ այս պաշտօնին Կոմս Պատէնի նշանակուած է: Մեծապէս կը դրուատի իւր առողջ դատաստանն, հաստատամտութիւնն եւ անցեալ պաշտօններու մէջ՝ ի մասնաւորի իւր Կալեքիայի կուսակալ, ցոյց տուած, յաջողակութիւնն: Ապագան պիտի հաստա-

տէ թեր ու դէմ՝ կուսակցութեանց յայնս կամ՝ երկուդը։

Ռուսմանիա։ Ծանօթ է արդէն՝ Ռուսմանիոյ թագաւորին իշլ ըրած ծամբորդութիւնն, որ Աստորիոյ Փրանց Ծօգէֆ կայսեր հետ տեսակցեցաւ, եւ այն՝ առիթ տուաւ այլեւայլ եմթարութեանց։

Ատոյդ է թէ Երրեակ նիգակակցութեան մերձեանալու կամ մինչեւ նաեւ յարելու գաղափարն ունեցաւ Ռուսմանիա, բայց շարժառիթներուն գալով՝ քաղաքը եմթարական հազար ու մէկ պատճառներ կը նշանակեն։ Ամենաշաւանականը կ'երեւայ թէ ի Պուլկարիա քաղաքակաւութեան կրած փոփոխութիւնն, եւ ապա՝ գային անստուգութիւնն միշտ ըլլայ գլուխահա հրապարակաւ իսկ յայտնելու իւր յարումն, զոր տեւելայն տարիներէ հետէ կը տածէր Երրեակ նիգակակցութեան համար։

Պաշքանեան թերակողի։ Ռուստոֆ ոռոսական նաւն այս ամիս դէպ ի Մոնթէնէկո կը ըրերը, «մեծագին պարգեւ, մի որուն տուիչն է՝ Ռուսիոյ կայսրն, իսկ պարգեւառուն՝ Սեւ-Լերան ժողովորդն։ «Պարգեւն,» (շատ անյատուկ անուանակոչութիւն մին է այս.) կը քաղկանայ 30.000 հրացանէ, 19,000.000 փամփուշտէ, քաղմաթի թնդանօթներէ, խորտընկէցներէ, դինամիտներէ եւ ուրիշ շատ մի պատերազմական նիւթներէ։ Այս «պարգեւին,» յանկարծական տրուիլն, տրուելու եղանակն, եւայն եւայն ուրիշ պարագաներ այլեւայլ կասկածներու տեղի տուած են, եւ օրագրաց խօսակցութեան առատ նիւթ կը հայթայթեն։ Կրնար դեռեւս համակրանք յայտնելու նպատակաւ ուրիշ յարմարագոյն պարգեւներ գտնուիլ. մանաւանդ այնպիսի պատերազմաւէր ժողովրդեան մը՝ որպիսի են Սեւ-Լերան քնակիչք,՝ ձեռքը այսչափ առատութեամբ վտանգաւոր նիւթներ գտնուիլն մեծ մոտատանջութեանց տեղի կրնայ տալ։ Երանի թէ շատ ուշ իմանայինք այս «պարգեւին,» բուն իսկ նպատակն. յամենայն դէպս քաղաքակաւութեան ծածուկ գործունէութեան՝ ակներեւ ապացոյց մին է, եւ Պուլկարաց, Սերպերու, Ռուսմանաց եւ նաեւ Յունաց եւ։.։ Աստորիոյ տէրութեան շատ հա-

ճնելի չի կրնար երեւալ մեծ տէրութիւնն մը՝ առ փոքրիկ տէրութիւն մը այսպիսի ծանրագին պարգեւներ տրուիլն, եւ կամ՝ զոնէ կրնան առիթ գտնել ըողորելու թէ՛ իրեն զոյլութիւնն ամէն կողմանէ ապահովուած այսպիսի տէրութեան մը հրացանն ու թնդանօթ տրուիլն, միշտ վտանգ կը սպառնայ՝ շահակից դրացի ժողովորդոց։

ՆԱԽԱԿԱՏՈՒԹ

Ս. Մ. ի Կ. Պ. Մի՛ գարմանար թէ ձեր կարելոյ համարած գրութիւնն դեռ ցայժմ տպուած չէ. պէտք էք գիտնալ որ խմբագրատներն թղթի կողմներ ալ կը գտնուին

Առ «անկեղծ», — Ձեր լեզուն ու ոճն պէտք էք դեռ յղկել։ Բաւական յաջողակ էք. 2) Ենդրակալութիւն։

Յ. Հ. ի Տ. — Ձեր հասցէն որոշ չէք նշանակած, կորսուած թուերուն պատասխանատու չէ խմբագրութիւնն։ Եւտե ամէն ամիս պիտի տեղափոխուիք, հասցէի փոփոխութիւնն փոքրիկ դրամական վճարք մ'ունի որ է՝ 25 սանդ.

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒԽԵՆԵՎՆ

ԼԵՃՈՒՆԱՐԱՆՆԱՆ — Սոփուս Պուկկէ եւ հայերէն լեզուն գոթացերէնի վրայ ըրած ազնեցութեւնը.

259. — Աշխարհաբար լեզուին արդի վիճակը. 262. ՌԻԶԳՐԱԿԱՆ — Սեւ ծովու ոռոսական եզերքը. 264. ՀԱՆՈՍՈՍԱԿԱՆ — Բորեացոց քարքն ու սովորոյթը.

271.

ԹՂԹԻՅՈՒԹԻՒՆ — Ս. Զանցիանի քարայրերն. 273.

ԳԻՏԵՆԿԱՆ — Ժննաց՝ փոփոխ գործածութեւնը. 277. ԱԶԳԱՐԱԿԱՆ — Դրանսիականիոյ Հայոց մայրաքաղաքը. 278.

ԲԱՆԱՏԵՂԻՍԿԱՆ — Իրականութիւնն ի՞նչ երազ. 285.

ՍԵՆԵԿԱՆ

Հնգկատանի կովսպանութեան կոնիք. 286. ՄԱՐԻԱՍԻՐԻԿ — Զկերուն քունը. 287. — Անոցաւոր Հոնիկ. 287. Վանիլայի մշակութիւնն ի Մեքսիկոյ. 287.

ՆՈՐԱՎԻՐԻԿ — Սերեւեան ծովուն եւ Սեւ ծովուն մէջ շոր ջրանց մը. 288. Ըղունգէն մարդուս նկարագիրը ժաննաւ. 288.

ՏԵՆՏԱԿԱՆ — Ենդրակեղեմներուն արատը հանել. 288.

ԲԵՂԵՔԱԿԱՆ ՏԵՆՏԻԿԻՒՆ

289.

ԲԵՂԵՔԱԿԱՆ ՏԵՆՏԻԿԻՒՆ

289.

ԲԵՂԵՔԱԿԱՆ ՏԵՆՏԻԿԻՒՆ

289.

ԲԵՂԵՔԱԿԱՆ ՏԵՆՏԻԿԻՒՆ

289.

ԲԵՂԵՔԱԿԱՆ ՏԵՆՏԻԿԻՒՆ

289.